# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵՐՁԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

1139 Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավան համայնք,
Երևանյան խճուղի 2-րդ փողոց թիվ 1 հեռ.(096)110044, merdzavan.armavir@mta.gov.am

## ՈՐՈՇՈՒՄ

*30 ապրիլի 2021 թվականի N23-Ա*

***ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի վեցերորդ մասի դրույթներով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝

***Համայնքի ավագանին որոշում է.***

1. Հաստատել ՀՀ Արմավիրի մարզի Մերձավան համայնքի ավագանու 2021 թվականի ապրիլի 30-ի արտահերթ (6) նիստի օրակարգը, համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

| ***Ավագանու անդամներ՝*** | *Կողմ (5)* | *Դեմ(0)* | *Ձեռնպահ(0)* |
|---|---|---|---|
| 1. Եսայան Ա. | | | |
| 2. Կարապետյան Գ. | | | |
| 3. Մարտիրոսյան Վ. | | | |
| 4. Շամբարյան Հ. | | | |
| 5. Տոնոյան Ա. | | | |

***Համայնքի ղեկավար՝*** ***Լ . Գրիգորյան***

Հավելված
ՀՀ Արմավիրի մարզի Մերձավան
համայնքի ավագանու 2021 թվականի
ապրիլի 30-ի N23-Ա որոշման

***ՄԵՐՁԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 30-Ի ԱՐՏԱՀԵՐԹ (6) ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԻ***

23. ՄԵՐՁԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(զեկ.ԼԵՎՈՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ)

24. ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀՈՂԱԿՏՈՐԸ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

(զեկ.ԼԵՎՈՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ)

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵՐՁԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

1139 Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավան համայնք,
Երևանյան խճուղի 2-րդ փողոց թիվ 1 հեռ.(096)110044, merdzavan.armavir@mta.gov.am


## ՈՐՈՇՈՒՄ

*30 ապրիլի 2021 թվականի N24-Ա*

## *ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀՈՂԱԿՏՈՐԸ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ*

Ղեկավարվելով Հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի առաջին մասի 8-րդ կետի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 21-րդ կետի դրույթներով, հաշվի առնելով, որ հողամասն ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի սահմանափակումների ցանկում, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի մայիսի 16-ի N 550-Ն որոշումը և հաշվի առնելով քաղաքացի Տիգրան Վլադիմիրի Հովսեփյանի դիմումը՝

***Համայնքի ավագանին որոշում է.***

1. Թույլատրել համայնքի ղեկավարին՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավան համայնքի վարչական սահմաններում գտնվող քաղաքացի Տիգրան Վլադիմիրի Հովսեփյանին սեփականության իրավունքով պատկանող կառուցապատված հողամասի /կադաստրային ծածկագիր 04-065-0613-0001/ ընդլայնման նպատակով օտարել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավան համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող բնակավայրերի նշանակության 0,28706 հա հասարակական կառուցապատման /կադաստրային ծածկագիր 04-065-0113-0003/ հողամասն ուղղակի վաճառքով կադաստրային արժեքով, որը կազմում է 12 750 700 /տասներկու միլիոն յոթ հարյուր հիսուն հազար յոթ հարյուր/ ՀՀ դրամ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

| ***Ավագանու անդամներ՝*** | *Կողմ (5)* | *Դեմ(0)* | *Ձեռնպահ(0)* |
|---|---|---|---|
| 1. Եսայան Ա. | | | |
| 2. Կարապետյան Գ. | | | |
| 3. Մարտիրոսյան Վ. | | | |
| 4. Շամբարյան Հ. | | | |
| 5. Տոնոյան Ա. | | | |

***Համայնքի ղեկավար՝*** **Լ . Գրիգորյան**